

ՄԱՐՏԻ

Տարեկան գինը 10 բուրջի, կես տարվանը 6 բուրջի.
Առանձին համարները 5 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ, редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Սովետական թիւերը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առաւօրեայ օրերէն).
Յայտարարութիւնները ընդունվում է ամեն լիզուով.
Յայտարարութիւնները համար վճարում են
խւարաբանիւր տողատեղին 10 կոպեկ.
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Սարգիս Խաչատրեան, Սօֆիա և Արտեմ Գոգալեանները խորին վշտով յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին, առաջինը իր սիրելի և անմոռանալի մօր, վերջինները իրանց թանգազին բոնձ.

ՀՈՒՓՍԻՄԷ ԽԱՐԱԶԵԱՆԻ

Սարգիս Խաչատրեան, Սօֆիա և Արտեմ Գոգալեանները խորին վշտով յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին, առաջինը իր սիրելի և անմոռանալի մօր, վերջինները իրանց թանգազին բոնձ.

Նատալիա Սողոմոնեան, Սօֆիա, Նունէ և Մարիամ Գրիգորեանները ցաւօք սրտի յայտնում են. առաջինը՝ իր թանգազին ամուսնու և միւսները՝ իրանց հօր՝ մասնաւոր հաւատարմատար՝

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼԵԱՆ ԳՕԼՕՇԵԱՆԻ

յանկարծակի մահը. Յուզարկաւորութիւնը սեփական բնակարանից, Կրասնոգորսկայա փողոց, № 14, կիրակի, մարտի 27-ին, առաւօտեան ժամը 9¹/₂-ին, դէպի Թանդոյեան ս. Աստուածածին եկեղեցի. Ամբիճը՝ մարտի 25 և 26-ին, երեկոյեան ժամը 7-ին. 1—1

Դարիս և Արշակ Թադեոսեանները յայտնում են առաջինը՝ իր անմոռանալի հօր, երկրորդը՝ իր անեղծը՝

ԳՐԻԳՈՐ ԳՕԼՕՇԵԱՆԻ

յանկարծակի մահը. Յուզարկաւորութիւնը սեփական բնակարանից, Կրասնոգորսկայա փողոց, № 14, կիրակի, մարտի 27-ին, առաւօտեան ժամը 9¹/₂-ին, դէպի Թանդոյեան ս. Աստուածածին եկեղեցի. Ամբիճը՝ 25 և 26-ին, երեկոյեան ժամը 7-ին. 1—1

ԲՈՎԱՆԴԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Բաշկիրոյ յայտնութիւններ. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Պաշտօնական հաղորդագրութիւն Գորու գաւառի խառնակութիւններէ մասին. Նոր ընկերութեան բացումը. Գեղեցիկ փառք. Բազուի աղէտի դոճերի օգտին. Չխար գիւղի հրկիզումները Նամակ Նոր-Նախիջևանից. Նամակ Սմբատեանի. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջ. Նամակ Գեղամախայից. Հեռագրի մասին. — ՅԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻՆԵՐ:

ԳՕԼՕՇԵԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ

Այն հեռագրից, որ հրատարակեցինք «Մշակի» երէկվայ համարում, մեր ընթերցողները տեղեկացան կողկասեան փոխարքայ կոմս Վոյտեյով-Դաշկովի մասին մեր երկրի բարեկարգութեան հարցերի վերաբերմամբ: Փոխարքան երկու նշանաւոր յայտնութիւններ է անում, որոնցից մէկն այն է, թէ նա ցանկանում է մեր երկրը, Անդրկովկասը մասնակից անել այն բարեբերին, որոնք իրագործված են կամ ծրագրվում են պետութեան ներքին նահանգներին համար, իսկ միւսը այն, թէ նա իր նպատակները մտադրել է իրականացնել կողկասեան տեղական ու ժողովրդական կողմից: Եւ Փոխարքան անելով այդ յայտնութիւնները Թիֆլիսից գնացած պատգամաւորութեանը, ամենին չէ տուել նրանց մասնաւոր և զարմանիչ ձև, այլ թողարկել է այդ բանի մասին յայտնել բացարձակ կերպով:

Վաղուց է, որ մեր երկրը չէր լսել այդպիսի քաջաբերող և միջնորդ խօսքեր: Մեր երկրի բանիմաց և գործունեայ կոլտուրական ուժերը վաղուց սպասում են, որ գործելու աղօտ ասպարէզ ունենան և կարողանան նուիրել իրանց աշխատանքը երկրի բարեկարգմանը այն բոլոր միջոցներով, որ տալիս է քաղաքակրթութիւնը:

Մեր երկրը այժմ դեռ հարուստ և երջանիկ չէ: Բայց նա ընդարձակ կերպով կարող է բարգաւաճել և բարձրութիւն տալ իր ազգաբնակչութեանը, եթէ արդարև զբաղվի իր նպատակաւոր պայմաններին մէջ: Այն պատահութիւնը:

որ յայտնում է Փոխարքան դէպի տեղական ուժերը, մենք հաւատացած ենք, որ կարգիւնարեւել բարեբար հետևանքներ: Եւ միայն մի բան է ցանկալի, որ այդ պատահութիւնը դառնայ սեփականութիւն այն բոլոր շրջաններին համար, որոնք պէտք է ազգին մեր երկրի գործերը ընթացքի վրա:

Անդրկովկասը բերկրութեամբ լրում է պատահութեան հեղինակաւոր խօսքը, հաւատարմով, որ նա մօտենում է արդիւնաւէտ գործունէութեան ճանապարհին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԳՐՈՒԹԻՒՆ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ

«КАВКАЗЪ» պաշտօնական լրագրում կարգում ենք:

«Գորու գաւառի խառնակութիւններին առիթով կան հետեւեալ փաստերը: Մարտի 14-ին կողկասեան Գեղի գիւղի (Յիւնիվալի գիւղախումբից) գիւղական կառավարութեան գիւղապետը, ոչնչացնելով բոլոր թղթերն ու գործերը: Մի և նոյն օրը, ինչպէս արդէն հաղորդված է, Գորի քաղաքի բնակիչները, մահակներով զինված, յարձակվեցին 6 գիւղերի վրա, որոնք զօրանոցից գնում էին գաւառական բանտի պահապաններին թիւն աւելացնելու. գիւղերն իսկ սպանեցին ամբողջ 2 հոգու և վերաւորեցին 7-ին: Մէրէթի գիւղի համայնքում բռնի հեռացրել են գիւղական պաշտօնականներին, փակել են գիւղական կառավարութիւնները, կառավարութեանը էլ զանազան ստորագրութիւններ անելով, արձակել են նրանց ծառաներին: Յունարի, Դիցի, Բէյթի, Շինդիսի և Գօրիսի գիւղերի համայնքները (Յիւնիվալի գիւղախումբ) Գօրիսի գիւղում հաւաքվելով, ստիպել են քահանային հրդուեցնել իրանց միաբան գործիչ, քահանայի կատարել է, սպանութեան սպանալիքից վախեցած: Դիցի գիւղում գիւղացիները յարձակվել են եկեղեցական-ծխական դպրոցի վրա, իսկ Բէյթիում քաղաքանոց են արել գիւղական համայնքի գիւղապետին և ոչնչացրել են գործերն ու թղթերը: Տիրմիսի գիւղում գիւղացիները բռնի ստիպել են կառավարութեանը:

ժառանգ Սուլթանովին ընտանիքով հեռանալ կառավարից, այդպէս են նրա մի քանի շէնքերը և արձակել են ծառաներին: Բարեբարացար հրդեհի առաջն առնվել է: Դիցի գիւղում, Դիցիստիսի ս. Գիւրգիսի մենաստանին պատկանող կառավարութիւնը գիւղացիները փորձեցին այդպէս կառավարի միջնորդները, բայց աշխարհութիւն չունեցան, որովհետեւ գիւղացիները գիտաւորութիւնը նախապէս նկատելի և առաջն առնվել է: Բոլորի գիւղում գիւղացիները քարոզեցին արքայի զանազան անձերի պատկանող 5 շրապ, Ինանի ջահանայի տունը և կողկասեան գիւղական դպրոցն ու գիւղական կառավարութիւնը, իսկ պաշտօնավար անձերին հեռացրին: Պալի գիւղում մարտի 15-ին գիւղացիներն ինքնակամ կողկոցեցին ընտանիքով հեռանալ, իսկ ծառաներին վճարեցին: Բոլորի գիւղում գիւղացիները հեռացրին Ունիւլով աղտակաւորն ու իր ընտանիքին իր կառավարից, նախապէս անհրաժեշտով, որ եթէ վերադառնան, կը սպաննեն. դրանից յետոյ սկսեցին կտրատել նրա կառավարի անտունը:

Մարտի 16-ին Շինդիսի գիւղում, մօտ 600 հոգուց բաղկացած ամբողջ—զանազան գիւղերից, շրջապատեցին գիւղական գիւղապետին և սկսեցին փշուր արձակել, կտրատել դռները և այլն: Ստորագրութիւն հետ միասին վրա է հասնում պրիստաւը. գիւղացիներն զգուշացնում են նրան չը մօտենալ, եթէ ոչ թէ ինքը և թէ ստորագրութիւնը կը սպանվեն: Եւ այդ գիւղացիները դուրս են բերում գիւղական կառավարութիւնից Թաքաւոր Կայսրի պատկերը և պատառոտում:

Մարտի 17-ին Ալաբէթի գիւղում հազարէնց ամբողջ յարձակվում է Թաքաւոր գիւղական գիւղապետին վրա և այդու ժամանակ գործերն ու թղթերը:

ՄԱՐՏԻ

Նոր ներքին փոխառութիւնը օրվայ խօսակցութեան առարկայ է: Չափազանց ձեռնադր պայմանները, որոնք յատկացրված են այդ փոխառութեան, հարց են առաջացնում թէ որքան նա ապագայից կարող է դառնալ, որ պետութեան ֆինանսները առանձին ճնշված գործեան մէջ չեն գտնվում, ինչպէս հաւատացնում է ֆինանսների մինիստրութիւնը: Համարեա ամբողջ մամուլը միաբերան վկայում է, որ այդպիսի մի ձախող փոխառութիւն չէ եղել: Ֆինանսների մինիստրութեան պաշտօնական օրգանը առանձնապէս շեշտում է, թէ որքան օգուտներ պիտի ստանան Ռուսաստանի դրամատէրերը այդ փոխառութիւնից: Դա, այո, ճիշդ է. պայմանները գնողների համար գերազանց են. 100 բուրջին բաց է թողնվում 96 ու, բերում է հինգ տոկոս, որից ոչինչ պետութեան հարկ չը պիտի վերցվի: Այո, այս առաւելութիւնները անուրաքանչէր են: Բայց ինչ են նրանք ցոյց տալիս: Ամենից առաջ դուրս է գալիս այն իրողութիւնը, որ դրամատէրերը, կամենալով ձեռք բերել նոր փոխառութեան տոմսեր, պիտի ծախեն և նախկին փոխառութեան տոմսերը, պետութեան բենտան, որ միայն 40% եկամուտ է բերում: Իսկ այդ դէպքում պիտի ընկնէ բենտայի արժողութիւնը: Եւ իբրեւ, նրա կուրսը ստատիկ ընկնում է: Այս բանը, ըստ երևոյթին մոռացված է և ֆինանսների մինիստրութեան պաշտօնական օրգանը, թեւով այն բոլոր օգուտները, որ տալիս է նոր փոխառութիւնը դրամատէրերին, կարծես այդքան բաւական համոզել չը համարելով, գիտնում է ռուս հասարակութեան հայրենասիրական զգացմունքներին, նկատել առնելով, որ փոխառութիւնը կնքվում է պատերազմական պէտքերի համար: «Сынъ Отечества» լրագիրը այդ առիթով գրում է.

Նախ և առաջ, եթէ դրամատէրերին այնքան ձեռնադր են ռուսաց փոխառութիւնները, նշանակում է նրանք շատ անձեռնադր:

են պետութեան համար, և պարծենալու բան այդտեղ կատարելապէս չը կայ. յետոյ, ամենքին յայտնի է, որ ստորագրութիւն և ռուս կապիտալիստներին բարեբարութիւն անելու համար չէ որ կնքվում է նոր ներքին փոխառութիւնը: Իսկ հայրենասիրական զգացմունքի համար անհրաժեշտ էր, որ լինէր մի պայման,—որ երկրը բոլորովն լինէր պատերազմ շարունակվող ցանկութեամբ: Ո՞վ կը վստահանայ ասել թէ ժամանակակից Ռուսաստանը գտնվում է այդպիսի երջանիկ պայմաններին մէջ: Եւ միթէ չը կան նշաններ, որոնք հարկադրում են բոլորին հակառակը կարծել:

Ռուս ժողովուրդը ճշմարտութիւնը թաքցնելու կարիք չունի: Ինու ժողովուրդը կարող է քաջաբան և աներկիւղ ասել ամբողջ աշխարհի աչքի առաջ, այո, մեր վարկը շատ վատ է, երբ դուրս շուկայում մեզ մերժեցին փոխառութիւն տալ: Ռուս ժողովուրդը չէ վախենում դառն ճշմարտութիւնից, չէ որ նրա մեղք չէ որ երկիրը այդպիսի դրութեան մէջ է գտնվում, չէ որ ժողովուրդը չէ վարում պետական տնտեսութիւնը: Բիւրօկրատիան հասցրեց Ռուսաստանը ներկայ գործախուրձներին և միայն նրան է ձեռնադր տարածել ինչ հէքիսներ այն մասին, թէ ամեն ինչ շատ լաւ գրութեան մէջ է: Բայց ոչ որ այլ ևս չէ հաւատում հէքիսներին և միայն միջոցը բոլոր անկարգութիւններին դէմ խօսքի ազատութիւն է: Թող տուէր վերցնել գիւղական գաղութները վարագործ ռուսաց ֆինանսներին, հարաւորութիւն տուէր պարզ և ազնիւ կերպով գրելու այն ամենի մասին, ինչ վերաբերվում է այդ շրջանին,—և ֆանտաստիական պատմութիւնները այլ ևս յեռնակէ չեն ունենալ: Լրիմի պատերազմից յետոյ մեր վարկը կորած էր, պետութիւնը կանգնած էր սնանկութեան առաջ, սարսափելի լուրեր էին տարածվում: 1862 թինքն առաջին անգամ հրատարակվեց պետական եկամուտների և ծախսերի նախաշուկա. ամենքը գիտէին, որ պարտատէրերը և ազգաբնակչութիւնը կասկածով են վերաբերվում և փրկութիւնը միայն հրապարակայնութիւնն է: Այդ յույսը արդարացաւ: Բէֆօրները և հրապարակայնութիւնը կենդանացրին վարկը, Թաքաւորի պետական տնտեսութիւնը: Ժամանակ է դիմելու բժշկութեան այդ փորձված մեթոդին:

Նոր փոխառութեան մասին այսպէս խօսում են և միւս, առաջադէմ ուղղութեան հետևող լրագիրները:

ՆՈՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲԱՑՈՒՄԸ

Երէկ, մարտի 25-ին, տեղի ունեցաւ Թիֆլիսում տպագրական գործով պարագողներին փոխադարձ օգնութեան ընկերութեան բացումը:

Նիստը նշանակված էր ցերեկով, Թիֆլիսի քաղաքային դռնային դահլիճում: Ընկերութեան անգամ գրվել ցանկացողները թիւը հասնում էր 100-ի:

Նիստը բացեց Վ. Կորգանեան, որի նախաձեռնութեամբ մշակվել էր ընկերութեան կառուցութիւնը: Կորգանեան հանդիսանում էր իբր նախագահ այն յանձնաժողովի, որին Թիֆլիսի խմբագրութիւնները կողմից յանձնված էր կանօնագրութեան վերջնական խմբագրութիւնը: Եւ բարձր իշխանութեան ներկայացնելով: Մասնաժողովի բարտուղար Ռ. Յովհաննիսեան կարգաց մի ամփոփ զեկուցուս այն նախնական գործողութիւնների մասին, որոնք կարեւոր են եղել և տեղի են ունեցել կանօնագրութիւնը ծրագրելու և հաստատելու համար:

Այնուհետեւ ժողովի մէջ հարց ծագեց այն բանի մասին, թէ ում պէտք է համարել նորակազմ ընկերութեան անգամ: Չայնելի մեծամասնութեամբ որոշվեց բոլոր ներկայ եղողներին ձանաչել անդամներ և համարել ընկերութիւնը կազմակերպված: Ժողովն ընտրեց նիստի նախագահ Կորգանեան և զինից հերթական գործերին: Ընդհանուր ժողովը շնորհակալութիւն յայտնեց յանձնաժողովին նրա կատարած աշխատանքի համար, արտայայտելով իր շնորհակալութիւնը ծախսարութիւններով:

Ընկերութեան անդամները շատերը մասնացողք արին Կանոնադրութեան պահստութիւններէ վրա. ուստի որոշուեց առաջարկել ապագայ վարչութեանը կազմել Կանոնադրութեան թերութիւնները վերաբերմամբ յատուկ զեկուցագիր և նրան ներկայացնել ընկերութեան արտակարգ նիստին ընտրութեան համար: Այնուհետև ժողովը կատարեց ընտրութիւններ, որոնց արդիւնքը հետեւեալն է: Վարչութեան կազմի համար ընտրվեցին վեց անդամ՝ Վ. Կորյանեան, Լ. Կիսիսեան, Գ. Լաւրիշիկի, Ս. Միխայիլով, Ռ. Յովհաննիսեան և Ֆ. Մախարաձէ:

Չորս փութանով՝ Սուրբուհի, Գ. Գ. Գրիգորի, Լաւրիշիկի և Ջաբար: Վերաւտուող յանձնաժողովի երեք անդամներ՝ Ղուկաս—Ա. Խաչատրեան—և Չերքեզով: Երեք փութանով Գ. Լ. Կիսիսեան, Լաւրիշիկի և Ջաբարիձէ: Նիստը սկսվեց ժամի 11-ին և տեւեց մօտ երեք ժամ:

ԳԵՂԵՑԻՎ ՓԱՍՏՆԸ

Երեւանում տեղի ունեցած խռովութիւններից ընդամենը մի երկու շաբաթ անց, բաղկացած է մեկ արձանագրել մի գեղեցիկ փաստ մեր դառն իրականութեան մէջ, որը դալիս է միանգամայն համոզելու, որ երկու զբաղի-հայ և թուրք—ժողովուրդները մէջ գոյութիւն չունին և չէ ունեցել ցեղական թշնամութիւն: Այդ փաստը մի և նոյն ժամանակ ապացուցեց, որ Բագրի և Երևանի արևմտի ղեկավարներ ոչ թէ հեռանում են երկու ժողովուրդների ղեկի միմեանց ունեցած հակակիր, և ժամանակի ընթացքում բացասաբար կուտակված արածարութիւնները, այլ կողմնակի դրդումներ, պղտոր ջրում ձուկ որոնող նահապետ մարդկանց կարած թակարդները, որոնք երկու միմեանց հետ դարձելով հայտաբերած ժողովուրդների ներքին փոխադարձ խռովութիւնների և արեւմտ ընդհարումների մէջ փնտրում են իրանց բաղադրական ինչ ինչ յետին մարքերի ամօթաբեր իրականացումը: Սակայն, որ այդ չար միտքը չի բացահայտու, և ոչ միայն չի բացահայտու, այլ և ի ցաւ այդ հրէշ արարածների, վերջին ղեկավարի ժամանակ թափված անմեղ արեւը եկաւ ամբապնդելու երկու ժողովուրդների մէջ եղած կապը, յանուն ընդհանուր շահերի, յանուն մեր սիրելի կովկասեան շահերի:

Այս աշխարհի հաւաստ սիրում ենք տածել մօտիկ ապագայի վերաբերմամբ, ի նկատի ունենալով աշխարհի գեղեցիկ երևոյթը: Այսօր հենց որ քաղաքում տարածվեց Գալաթիայի մեծ մուշտեղի մահվան լուրը, ինքնաբերաբար, համարեա իւրաքանչիւր հայի մէջ միտք յղացաւ որ և է ձեռով ներկայանալ և յայտնել իր ցաւակցութիւնը դրացի ժողովուրդին, նրա կրած վշտի առիթով, լանձին սիրելի կրօնապետի: Եւ այնքան բնական ու սրտանց էր այդ ցանկութիւնը, որ ժամը դեռ ևս 11-ից չուկայի ըտլըր խանութները փակվեցին և մեծ բազմութեամբ հայեր հաւաքվելով առաջնորդարան՝ առաջնորդի և Գալաթիայի վարդապետի ու մի երկու քահանայների մասնակցութեամբ դիմեցին ղեկավար Գիւրգիսին, որը հաւաքված էր թուրք ժողովուրդը իր հոգևորականութեան հետ միասին, հոգեհանգստի մաղթանքներ կատարելու հանգուցեալ Մուշտեղի համար: Երեք հազարի չափ հայ ժողովուրդի խուռը բազմութեան կարգապահ և հանդիսաւոր մուտքը մղվելիք գաւառի տալարի էր և սրտաշարժ, սրտաշարժ այն տեսակէտից, որ այդ երկու ժողովուրդները հանդիպելով միմեանց այն մի թիւղ գետին վրա, կարծէք ասում լինէին միմեանց զղջման զգացմունքով, լինէր մենք այդ մի մի թիւղ գետինները վրա, ուր կարող էինք միասին մի փոքր պատա դգալ և մեր ցաւերը միացնել ու կիսել, պատահում ենք միմեանց ծանր և ցաւալի պատահանքներից յետոյ: Այո, այս էինք զգում իւրաքանչիւրս:

Մասնը մղվելիք, բարձր միմեանց լավող թողրը բայտի իր ապաւորութեան տակ, որ թուրք ժողովուրդը մի առանձին յարգանքով մղվելիք ներսում տեղ տվեց վարդապետներին և որոշ չափով ժողովուրդին, որքան հնարաւոր էր. իսկ անաղին ժողովուրդը ըմբոյ մղվելիք առաջին հրապարակը: Հոգեհանգստի մաղթանքները և պարսկական բաղլը եղանակները կատարելուց յետոյ, խօսեցին զարդի, Կարապետ վարդապետը, Գ. Կամարալեանը, մի քանի խօսք, Գալաթիայի վարդապետը, Փանահ խանը—նորից դադրեց: Անկերվ ցաւակցութիւններ,

հայերի կողմից, շնորհակալութիւններ թուրքերի կողմից և ցաւալի ղեկավարի մոտացութեան ու մի ամուր զբաղիական կապի հաստատութեան երկու կողմերից: Նոյն հանգիստաւորութեամբ հայ ժողովուրդը հեռացաւ գոհ, շատ գոհ տրամադրութեամբ, տանելով այն համոզմունքը, որ եղբայրասպան ղեկավարի կրկնութիւնը այլ ևս հնարաւոր չէ: Ա. Դ. Կ.

ԲԱՆԴՈՒՆ ԱՂԵՏԻ ԶՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԻԱ

Ստացանք. 1) Լալաբիգի հայ ուսանողներից (առանց կրօնի և ազգի խտրութեան) 4 ընտրվեց 53 կօպ. (10 մարդ), 2) Նոր-Բայազետի մի խումբ արհիւններից տիկ. Ե. Ջաբարեանի միջնոցով 40 ր., 3) Հնչեղտի հայ հասարակութիւնից 3. քահ. Արքանամեանի միջնոցով 88 ր. 80 կ., 4) Նիկ. և Նաւ. Բերքերեաններից (Ս. Պետրոսով) 10 ր., 5) Վարդապետից բ. Հայրապետեանի ձեռքով հաւաքած 151 ր. 50 կ., 6) Ալեքսանդր-Գրուշիկի «Շախաթ» Միւրտի Շարոյանի միջնոցով հաւաքած 16 ր. 25 կ., 7) Բանասերի հասարակութիւնից 40 ր., 8) Մեթուսի Մանթաշեանի և ընկ. Ս. Գործ. հայ բանտներից 107 ր. 75 կ., 9) Մարտիկալից Վաղարշի Վարդանեանի միջնոցով հաւաքած 30 ր. 50 կ.: Ընդհանուր գումարը նախկին ստացածների հետ միասին 22,672 ր. 80 կօպէի:

ԶԵՄԱՐ ԳԻՒՂՈՒՄ ՀՐԿԻԶՈՒԱԾՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք. 1) տիկ. Շուշանիկից 2 ր., 2) 3. քահ. Արքանամեանից 2 ր., 3) Ս. Էլմիսեանի ձեռքով մի քանի ուսուցիչներից 3. Գրիգորեանի միջնոցով 10 ր., 4) Սարգիս և պիսիպոս Փիլոյանից (Սեան) 3 ր., 5) Բալախանի «Արամազդ» ընկ. ծառայողներից 200 ր., 6) Բերք-Ելապետից Ս. և Ս. Գալաթիեանների միջնոցով «Շիթով» նաւթահանքից 22 ընտրվեց 75 կօպ., 7) Բալախանից «Միլոսով» ընկ. նաւթահանքի արհեստաւորներից Գ. Ս. Գալաթիեանի ձեռքով հաւաքած 28 ր., 8) Բանասերի հասարակութիւնից 20 ր. 20 կօպ., 9) Դերեհան գիւղի հասարակութիւնից Մ. Կարապետի միջնոցով 28 ր. 85 կ.: Ընդհանուր գումարը նախկին ստացածների հետ միասին 1051 ր. 87 կօպէի:

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱՆԻԶՆԵՐԻՆ

Մարտի 14-ին ինչպէս ձեռն հաղորդած էի, Նախիջևանի հայ հասարակութիւնը մտադիր էր Բօստօվի կալուստի «Լօրօնցով-Դաշկովին» որի համար հեռագրով ստացած էր համաձայնութիւն: Երէկ, ամսին 13-ին, այսօրեւ մի մասնաւոր տան մէջ այդ նպատակով հրաւիրված էին 45 ի մօտ անձինք՝ ընկերու, թէ ինչպիսի ընդունելութիւն պէտք է ցոյց տան փոխարէպոյն և խնդիրներ առաջանան: Ժողովը միաձայն եկաւ այն որոշում, որ եթէ փոխարէպոյն Բօստօվի կայարան հասնելու լինի ցերեկով, 15 հոգուց բաղկացած մի պատգամաւորութիւն դիմաւորէ աղ ու հացով մի յիշատակաւ ներկայացնէ, իսկ եթէ անցնէ գիշեր ժամանակ, միմիայն յիշատակաւ ներկայացնէ:

Երբեմն հաւատարմատար պ. Չալխուշեան կարապ ժողովին իր կազմած մի խնդիր— յիշատակաւ դիմաւոր, որը բովանդակում է զիտաւորապէս հայրական կեանքի ազգային-կրօնական, եկեղեցական ներկայ կարգերը և հայերի ներկայ դրութիւնը Կովկասում և միջնորդութիւններ յարուցանում այդ դրութեան բարւոքման, կովկասեան ազգերի համերաշխութեան և առնչաւորակ ներկայ ծանր դրութեան բարւոքման մասին:

Այս յիշատակաւ դիմաւոր փոփոխութիւններից յետոյ միաձայն ընդունվեց և կազմվեց 15 հոգուց բաղկացած պատգամաւորութեան մի ցանկ, որը ս. Սալ Վաղարշի վանանոյր Վահան վարդապետի և տեղի աւագ քահանայ Չալխուշեանի հետ միասին մի ամսի մէջ աղ ու հաց պիտի ներկայացնէ փոխարէպոյն և տայ յիշատակաւ դիմաւոր: Ներկայ շարքին փոխարէպոյն ապաւում է Բօստօվ. այդ որոշումը կը կատարվի:

Այդ յիշատակաւ դիմաւոր կրկնով ընդհանուր ընտրութիւն և ըմբռնելով հայկական կեանքի աչքի ընկնող պահանքներ, սակայն չէ շօշափում առանձնակի և կարևոր փոփոխութիւնները, մի առ մի չէ թուում թէ ինչ հարցում ինչ կարևոր փոփոխութիւններ են հարկաւոր, ինչպէս այդ արեցին և շարունակում են անել Ռուսաստանում բնակվող զանազան ազգերը և հաւաքակութիւնները:

Ս. Տ. Մարտիրոսեան

ՆԱՄԱԿ ԽՐԱԳԻՐՈՒԹԵԱՆ

Ժընիվ, մարտի 29-ին Թող տուէք, խնդրում եմ, «Մշակի» միջնոցով յայտնել իմ խորին շնորհակալեք այն անձանց, որոնք թէ Կովկասից և թէ Արտասահմանից հեռագրով և նամակներով իրանց ցաւակցութիւնը արտայայտեցին իմ ամուսնի Գրիգորեան Միքայելեանի մասին առիթով: Համակրանքի այդ խուռն արտայայտութիւնը իմ և իմ որդի Ռուբենի միակ սփոփանքն է վշտի այն ծանր բօլեաներին:

Ընդունեցէք, խնդրում եմ, իմ յարգանքի հաւատարմութիւնը:

Տիկին Եւգենիա Միքայելեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կովկասի կառավարչապետի խորհրդի անդամ ֆինանսների միւնիստրութեան կողմից դադարեց խորհրդական Ն. Ա. Սուլթան Կրիմ-Գիրէյը Կովկասի Փոխարէպոյի կողմից կոչվեց Պետերբուրգ պաշտօնական գործերով: Նա մեկնեց երկէ երեկոյան գնացքով: Այդ բանը թիֆլիսում տեղի է տուել կարծիքով, որ նրան նշանակելու են Փոխարէպոյի օգնական բաղադրական վարչութեան գործերում:

Պետական յայտնի գործիչներից մէկի հետ խօսակցութիւն է ունեցել «ՀօՅ.» ի աշխատակիցը: Երեւանի է, որ Լեհական Թագաւորութեան և Պրիվիլիյակի երկրում կառավարութիւնը մտադիր է մտնել զեմալօսեո, ինչպէս Ռուսաստանի ներքին նահանգներում: Այդ նպատակով տեղական ազգաբնակչութեան ընդհանր ներկայացուցիչներից ժողովներ պէտք է կազմվեն, ընկերու այդ և տեղական ինքնավարութեան վերաբերող ուրիշ շատ հարցեր: Իսկ ինչ վերաբերում է լեհական լեզուի գործածութեանը երկրի դպրոցներում, դա էլ լինելու է տեղական ժողովների խորհրդածութեան նիւթ:

Թիֆլիսի դուժայի դահլիճում Մ. Ն. Սօրոցկու նախագահութեամբ տեղի ունեցաւ Թիֆլիսի գործակաւարների փոխադարձ օգնութեան ընկերութեան ընդհանուր ժողովը: Նիստն դադարեց գործակաւարների իրանց տեղերին ներկայացրած պահանջների ընտրութիւնով: Ժողովը գտաւ, որ հնարաւոր է գործակաւարները համար 9 ժամվայ աշխատանք օրական, իսկ կօնսորշիկների համար 6—8 ժամ, չը հաշվելով դրա մէջ 2 ժամ հանգստութիւնը: Որովայն պահանջել դադարեցնել գործակաւարներին ճաշի փող տալը և դրա փոխարէն աւելացնել առճիւղ: Մի տարու անկ ծառայող գործակաւարները պէտք է ունենան տարեկան մի անգամ 15 օրվայ արձակուրդ, առանց այդ օրերի առճիւղը զրկվելու, իսկ հիւանդութեան ղեկավար նրանց չեն զրկվելու ոչ տեղից, ոչ էլ առճիւղից մի ամիս, եթէ գործակաւարը ծնունդում է նոյն տեղում 3 է անել տարի—2 ամիս, իսկ եթէ 5 տարուց անել է ծնունդում—3 ամիս շարունակ նա պէտք է ստանայ իր առճիւղը և տեղից չը զրկվի: Եթէ տեղն առանց յարկի պատճառներ ղուրս անէ գործակաւարներին, պէտք է ամեն մի ծառայած տարվայ համար մէկ ամսվայ առճիւղ տայ նրան ու այնպէս արձակէ, իսկ եթէ գործակաւարը ծնունդում է նրա մօտ 3 տարուց անել—պէտք է տեղը վճարէ ամեն մի տարվայ համար 1½ ամսվայ առճիւղ: Գրեթէ օրերն անապայման պէտք է գործերը դադարեն և գործակաւարներին հանգիստ տրվի: Ժողովն իր ընկերութեան վարչութեանը լիազօրութիւն տուեց բանակցելու վաճառականների հետ:

Թիֆլիսի բաղադրային ինքնավարութիւնը մտադիր է առաջիկայ ամսից հիմնել քաղաքային սահմանափակ կամ վիճակադրական բիւրօ:

«Դանձակի գաւառի Բանանց գիւղի հայ հասարակութիւնից Վաղգէն Տէր-Աւետիքեանի միջնոցով ստացանք 60 ր. 20 կօպ., որից 50 ր. հասարակական գումարներից է, 7 ր. հանգստակի է Պօլոս քահանայ Եպիսկոպոսեանը, իսկ մնացած 3 ր. 20 կ. հանգստակի է տեղական գրադիր Կարաբանովի: Այդ գումարից 40 ր. Բանանցի հասարակութիւնը նուիրում է Բագրի արեւանի ղեկավարի դռներին, իսկ 20 ր. 20 կ. Չալաք գիւղում պատ համ աղէտի վնասվածներին:

Թիֆլիսի Սալախալի բազարի իշխ. Մուսաբանակու շինութեան մէջ գտնվող խանութ:

պանները ներկայացան կալուածատիրուհուն և խնդրեցին խանութները վարձը պակասացնել, որովհետև վերջին ժամանակ կապաւորուուն սաստիկ բարձրացրել էր վարձագինը: Յարգելի իշխանուհին միայն վեց ամսվայ համար խոստացաւ որոշ չափով պակասեցնել գնը:

Մարտի 21-ին Թէլաւում գործադուր արած 30—40 գործակաւարներ յարձակվեցին Մարգարեանի խանութի և Յարութիւնեանի կանգնեցնելու վրա և կոտորածներ լուսամուտները: Իսկ մարտի 22-ին քաղաքային դպրոցը 40—50 աշակերտներ ներս խուժեցին հոգևոր դպրոցը և ընդհատեցին դպրոցի վարչութեանը գաղափարները դասերը և դպրոցը փակել: Այդտեղից երկու դպրոցների աշակերտները միասին գնացին ս. Նունէի դպրոցը և տեղեկներն այնտեղ էլ դասերը դադարեցնել ու աշակերտուհիներին արձակել:

Գորու գաւառի Դէլիսվարի գիւղից հաղորդում են «Հ. Օ.»-ին, որ 3000 հոգուց բաղկացած գիւղական ժողովը որոշեց փակել տեղական ուսումական միւնիստրութեան դպրոցը, որովհետև այնտեղ դասաւանդութիւնը չէ կատարվում մայրենի լեզուով: Այդ և նրա մօտակայ գիւղի ընկերներն այժմ խմբերով հանդարտ ման են գալիս և խլում ագնուական կալուածատէրերի ղեկերը:

Վրաց «Իվերիա» լրագիրը հաղորդում է, որ Բաշիի ագնականութեան պարապլուս իշխան Գ. Կիպիանին, ներկայ գիւղացիական շարժումների ազդեցութեան տակ, գիւղացիներին նուիրեց իր ամբողջ կարողութիւնը և ոչնչացրեց իր ունեցած ճորտատիրական թղթերը:

«ՀՅՈՅ» լրագիրը հաղորդում է, որ Պետերբուրգում մարտի 17-ին, ցերեկվայ ժամը 2-ին Մօրսկոյ փողոցում ներքին գործերի միւնիստրի օգնական Դուրնովի և Պետերբուրգի գնեղալ նահանգապետի տան մօտ ձերբակալեցին մի անյայտ անձի, որը վերջին օրերում զանազան ժամանակներում գալիս կանգնում էր այդ տեղերում, կարծես սպասելով մէկին: Երբ այդ երկու տների վրա հակող բաղադրիկ գաղտնի գործակալներից մէկը, կանկալեղով այդ մարդու վրա, բռնում է նրա ձեռքից և հարցնում նրա ով լինելը, նա Բաշանիսի գաղտնաւոր հանելով կրակում է գաղտնի ոստիկանի վրա: Օգնութեան է հանում պրիստաւի օգնականը, նա վերաւորում է վերջինիս փորեց, բայց վերջապէս ձերբակալվում է: Ձերբակալվածը չէ ուղղում տալ իր անունը: Ասում են, որ նա նպատակ է ունեցել սպանութեան փորձ անել Դուրնովի և Տրեպոլի ղեկ:

«Berl. Tagebl.»-ին հեռագրում են Պետերբուրգից մարտի 15-ին. «Պետական-քարտուղար Վիտալէն մտադիր է ներկայացնելու մի քանի կարևոր բարենորոգումներ ծրագրեր, առանց սպասելու ժողովրդական ներկայացուցիչների ժողովին: Այսպէս—նա արդէն մշակել է մամուլի ազատութեան, հնաւանդների, սենյաւոր բարեփոխման, արժիւնտարացիայի կանոնադրութիւնից պաշտպանվելու և ուժեղացրած պահպանութիւնը վերացնելու մասին օրէնքների նախագծեր: Այդ օրէնքների նախագծերի ընտրութեան պատճառով այս տարի պէտք է երկարէ պետական խորհրդի դադարումը ժամանակամիջոցը»:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ մարտի 17-ին, երեկոյան ժամը 4-ին, Մօրսկոյ և Պօլսկոյ փողոցների անկիւնում Պետերբուրգի գնեղալ-նահանգապետ Տրեպովի արագ սլացող կառքի վրա ատրճանակ արձակեց անկեւում կանգնած մի երեսասարդ, որ հագած էր խանութի տներն ապրանք տանող ցրվիչ զգեստ: Չարամիտը վրիպեց, և կառքն անջնաւ հեռացաւ: Այդ անձն անմիջապէս ձերբակալվեց լրտեսներից և կառքի վրա զրկվով տարվեց ոստիկանատուն: Երեսասարդը հրաժարվեց իր անունը տալ: Նա զեռ ըտորովին երեսասարդ էր, փոքրիկ բնութեով. հագել է, ինչպէս երևում է, ցրվիչ զեռ ըտորովին նոր կարված զգեստ: Նա երեսացել է իր ցրվիչ՝ այդ ղեկարգ 2—3 օր առաջ: Ձերբակալութեան ժամանակ նա գուհաւեց, բայց անվրդով մնաց:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՂՁ

Պատերազմական բեմից: Վերջին օրերս շատ անկաւ են և առատ չին տեղեկութիւններով

